State of California—Health and Human Services Agency
Department of Health Care Services

Medi-Cal Իրավասության և գույքի վերականգնման ստանդարտներ

Ապահովագրողների, գործակալների և բրոքերների կողմից տարածելու համար

2024 թ. հունվարի 1-ից Medi-Cal ծրագիրն այլևս չի հաշվում ձեր ակտիվները նպաստների համար իրավասու լինելու մասին որոշում կայացնելիս: Սա նշանակում է, որ կարիք չկա զեկուցել ձեր բանկային հաշիվների, տրանսպորտային միջոցների կամ ունեցվածքի մասին: Medi-Cal-ը դեռ կուսումնասիրի ձեր եկամուտը՝ պարզելու, թե արդյոք դուք իրավասու եք: Սա ներառում է աշխատանքից ստացված եկամուտը, երեխայի և ամուսնու աջակցությունը, Սոցիալական ապահովության կենսաթոշակային հաշմանդամության նպաստները, վարձակալության եկամուտը և այլն:

Տարեկան ռենտաներ և Medi-Cal գույքի վերականգնում

Երբ Medi-Cal-ով անձը մահանում է, Medi-Cal-ը կարող է որոշակի գումար հետ պահանջել այն ծառայությունների համար, որը ստացել է 55 և ավելի տարեկան հասակում: Այս ծառայությունները ներառում են բուժքույրական խնամք, օգնություն տանը և որոշակի հիվանդանոցային և դեղորայքի ծախսեր:

Եթե անձը որևէ բան չի ունեցել, երբ մահացել է կամ ստիպված չի եղել անցնել իրավական գործընթաց, որը կոչվում է կտակի պաշտոնական վավերացում, Medi-Cal-ը հետ չի պահանջի գումարը: Կարող են լինել որոշ հատուկ կանոններ կամ հատուկ դեպքեր, երբ նրանք չեն պահանջի:

Ֆինանսական ծրագրերի որոշ տեսակներ, որոնք կոչվում են տարեկան ռենտաներ, կարող են լինել Medi-Cal-ի մի մասը, որը պահանջում է գումար վերադարձնել մահից հետո: Դուք կարող եք ավելին իմանալ՝ այցելելով Medi-Cal Estate Recovery Program կայք հետևյալ հասցեով՝ https://www.dhcs.ca.gov/TPLRD_ER կամ զանգահարել 1-916-650-0590:

Անհատների համար, ովքեր օգտվում են բուժքույրական հաստատությունների խնամքից

Եթե ամուսնացած չեք, ամեն ամիս ձեր եկամտի մեծ մասը կուղղվի ձեր բուժքույրական հաստատությանը կամ ձեր բուժքույրական խնամքին: Դուք կարող եք **ամսական $35** պահել ձեր անձնական կարիքների համար:

Կան հատուկ կանոններ, որոնք կարող են թույլ տալ ձեզ փոխանցել ձեր եկամուտների մի մասը կամ ամբողջը ձեր ամուսնուն կամ գրանցված նույն տանն ապրող զուգընկերոջը: Այս կանոններն օգնում են համոզվել, որ տանը գտնվող անձը բավարար գումար ունի ապրելու համար: Երբեմն դատարանի

հատուկ դատավորը (վարչական իրավունքի դատավորը) կարող է թույլ տալ, որ նրանք ձեզանից ավելի շատ եկամուտ պահեն (42 United States Code § 1396r-5)։

Ես կարդացել եմ վերը նշված ծանուցումը և ստացել եմ պատճենը։

Գնորդի ստորագրությունը.

_____Ամսաթիվ._____

Կողակցի կամ գրանցված նույն տանն ապրող զուգընկերոջ ստորագրությունը.

_____Ամսաթիվ._____

Իրավական ներկայացուցչի ստորագրությունը.

_____Ամսաթիվ._____